Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 18-ին լրացավ ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 50-ամյակը։ Սովետական Միության Գերագույն Սովետը այդ առթիվ պարգևատրեց նրան Լենինի շքանշանով։

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Վ. Հ. Համբարձումյանը Սովետական գիտության պայծառ դեմքերից մեկն է, որի գործունեությունը արդասավորել է սովետական և համաշխարհային գիտությունը։ Վ. Հ. Համբարձումյանի կենսագրության տարեթվերը բազմաթիվ չեն, բայց ամեն մեկը դրանցից նշանավորում է այդ մեծ գիտնականի համար մի նոր թռիչք դեպի առաջ։ Վ. Հ. Համբարձումյանի ընդունակությունները շատ վաղ են երևան եկել։ 16 տարեկան հասակում նա ավարտել է միջնակարգ դպրոցը, 20 տարեկան՝ Լենինգրադի համալսարանը։ 1926 թ. նա սկսել է տպագրվել և իր ուսանողական տարիներին դարձել 10 գիտական աշխատությունների հեղինակ։ Դառնալով Լենինգրադի Պուլկովյան աստղադիտարանի ասպիրանտ

Վ. Հ. Համբարձումյանը լուրջ և խոր կերպով զբաղվում է աստղագիտությամբ, մաթեմատիկայով և մաթեմատիկական ֆիզիկայով։ Վ. Հ. Համբարձումյանի այս տարիների և հետագայի աշխատությունները մաթեմատիկայի և ֆիզիկայի բնագավառում սկզբնավորել են նոր ուղղություններ, որոնք զարգացրել են նրա աշակերտները և մեծ արդյունքների հասել։ Ատոմի կազմության, ճառագայթող միգամածությունների, ջերմաջերմ աստղերի ճառագումների և այլ հարցերի շուրջը գրված նրա աստղագիտական աշխատությունները դարձել են անկյունաքարեր բազմաթիվ հարցերի լուծման համար։ Վ. Հ. Համբարձումյանի կողմից ստեղծվել է ֆլյուկտուացիայի տեսությունը, որ Գալակտիկայի ճառագայթման և կլանման պրոբլեմների լուծման մեջ խաղացել է մեծ դեր։ 1941-43 թթ. Վ. Հ. Համբարձումյանն ստեղծել է պղտոր միջավայրում ճառագայթի ցրման օրիգինալ տեսություն, որը դարձավ հզոր միջոց արևի, աստղերի և մոլորակների մթնոլորտի ուսումնասիրության, ինչպես և աստրոֆիզիկայի և գեոֆիզիկայի շատ հարցեր լուծելու համար։ Վ. Հ. Համբարձումյանն աստրոֆիզիկայի ձեռնարկի առաջին հեղինակն է։ Իր գիտական գործունեության բոլոր փուլերում Վ. Հ. Համբարձումյանին հետաքրքրել են աստղերի և աստղային համակարգերի ծագման պրոբլեմները։ Նրա հետազոտություններն այդ ուղղությամբ հանգեցրին նրան «աստղային ասոցիացիաների» հայտնագործմանը։ Այդ հայտնագործումը, որն ընդունվեց ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս, մեծ դեր խաղաց աստրոֆիզիկայի զարգացման մեջ, փիլիսոփայական կարևոր հարցերի լուծման մեջ։ Այդ հայտնագործումը հիմնավորեց մարքսիզմի այն հիշտ տեսակետը, որ աստղագոյացումները շարունակվում են, և մատերիան գտնվում է անընդհատ փոփոխության և կերպափոխման մեջ։ Մեծ գիտնականի վաստակներն ընդունել են արտասահմանյան աստրոֆիզիկայի խոշոր հիմնարկներն ու շկոլաները։ Դրան իբրև ապացույց և իբրև հետևանք Վ. Հ. Համբարձումյանն ընտրված է արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ։ Նա թղթակից անդամ է Ավստրիայի Գիտությունների ակադեմիայի, Բեռլինի գերմանական ԳԱ, Բելգիայի թագավորական աստղագիտական ընկերության։ Նա ընտրվել է Բոստոնի՝ Ամերիկյան Գիտությունների և Արվեստի ակադեմիայի պատվավոր անդամ, Անգլիական թագավորական աստղագիտական ընկերության պատվավոր անդամ և Ամերիկյան աստղագիտական ընկերության պատվավոր անդամ։ 1956 թ. շնորհվել է Ֆրանսիական աստղագիտական ընկերության Ժանսենի անվան մեդալ։ Վ. Հ. Համբարձումյանը 1939 թ. ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ է, իսկ 1953 թ. իսկական անդամ։ Իր ստեղծագործական ուղին եղել է անընդհատ առաջադիմող ուղի, որոնումների, հայտնագործությունների մի պայծառ ուղի, որով ընթանալով, նա իր հետ տարել է աշակերտների մեծ բազմություն։ Վ. Հ. Համբարձումյանի հետազոտությունները, հատկապես աստրոֆիզիկայի բնագավառում, նպաստեցին այդ գիտության վերջնական ձևավորմանը, խորացմանը, նոր աստիճանի բարձրացրին Սովետական Միության աստրոֆիզիկան։

Սովետական Միության կառավարությունը, բարձր գնահատելով Վ. Հ. Համբարձումյանի ծառայությունները, պարգևատրել է նրան Լենինի երկու շքանշաններով։

Վ. Հ. Համբարձումյանը, մեծ գիտնական լինելով, նաև գիտական գործի մեծ կազմակերպիչ է։ 1946 թ. նա նախաձեռնել է Բյուրականի աստղադիտա-

յանի կառուցման գործը և հաջողությամբ գլուխ բերել։ Ստեղծելով հետազոտողների տաղանդավոր կոլեկտիվ՝ Վ. Հ. Համբարձումյանը Բյուրականի Աստղադիտարանը դարձրել է աստրոֆիզիկայի համաշխարհային կենտրոններից մեկը։ Բյուրականի Աստղադիտարանի կոլեկտիվի հետազոտություններն ու արդյունքները իր վրա են գրավում ամբողջ աշխարհի խոշոր մասնագետների ուշադրությունը։ 1947 թ. Վ. Հ. Համբարձումյանը ընտրվել է ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ և անփոփոխ կերպով գլխավորում է գիտական այդ մեծ հաստատությունը մինչև այսօր։ Համբարձումյանի պրեզիդենտության շրջանում հատկապես մեծ ծավալ ստացան կիրառական գիտությունները. բացի աստրոֆիզիկայից, լայն ծավալ ստացան մաթեմատիկայի, ֆիզիկայի և այլ գիտությունների զանազան մարզերի հետազոտությունները, հիմնադրվեց հաշվիչ մեքենաների կենտրոն և այլն։

Վ. Հ. Համբարձումյանը առանձին ուշադրությամբ և սիրով է զբաղվում հասարակական գիտությունների զարգացման գործով։ Վ. Հ. Համբարձումյանի անմիջական հոգատարության հետևանքով մեր բաժանմունքը, որը հիմնադրվելու ժամանակ ուներ ընդամենը 3 ինստիտուտ, այժմ հարստացել է նոր ինստիտուտներով և այլ հաստատություններով։ Հիմնադրվել և գործում են Տնտեսագիտության և Արվեստի ինստիտուտները, ստեղծվել են Փիլիսոփայության և Արևելագիտության ինքնուրույն սեկտորներ, ծավալվել է Պետական պատմական թանգարանը, հիմնադրվել է Գրականության և արվեստի թանգարանը, ընդարձակել են իրենց գործունեությունը Լեզվի, Պատմության, Հայ գրականության ինստիտուտները։ ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքը այժմ դարձել է հայագիտության խոշոր կենտրոն։ Ընդարձակ ծավալ են ստացել հայագիտական հրատարակությունները և հայագիտական զանազան հարցերին նվիրված մենագրությունները։

Մեծ ծավալ են ստացել հնագիտական հետազոտությունները և պեղումները, որոնք մեր ժողովրդի պատմության համար լավագույն փաստեր ու նյութական կուլտուրայի պերճախոս մնացորդներն են մատակարարում։ Դվինի, Գառնիի, Կարմիր բլուրի և Արինբերդի պեղումները միութենական արժեք ներկայացնող ձեռնարկումներ են, որոնց ծավալման գործում մեծ դեր է խաղացել մեր պրեզիդենտը։

Չենք ուզում ավելին ասել, բայց նշում ենք, որ դժվար է գերագնահատել Վ. Հ. Համբարձումյանի գիտական և կազմակերպչական ծառայությունները։

Վ. Հ. Համբարձումյանն ունի բազմաթիվ գովարժան բարեմասնություններ, այդ թվում անչափ համեստություն և նվիրվածություն իր Սովետական հայրենիքին և իր ժողովրդին, որոնց նվիրարերում է նա իր լայնածավալ տաղանդը։ 1947 թ. Համբարձումյանին մեր ժողովուրդն ընտրել է ՀՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, իսկ 1953 թ. սկսած՝ ՍՍՌ Միության Գերագույն Սովետի դեպուտատ։ Վ. Հ. Համբարձումյանը մեծ հոգատարություն է ցուցաբերում գիտությունը մասսաների սեփականությունը դարձնելու գործում. նա գլխավորում է Գիտական և քաղաքական գիտելիքների տարածման ընկերությունը նրա սկզբնավորման օրից։ Քիչ ենք խոսել Վ. Հ. Համբարձումյանի գործունեության և ծառայությունների մասին, որովհետև ստիպված ենք եղել խնայել նրա համեստությունը։ Այս անգամ էլ իր պանծալի 50-ամյակի առիթով խոսում ենք զսպված՝ հաշվի առնելով նույն պատճառը։ Սակայն լիաձայն և լիասիրտ պիտի ասենք, որ նա սովետական լավագույն գիտնականի

տիպար է, որի վարքից, բարքից, աշխատասիրությունից, համեստությունից և հայրենանվեր գործունեությունից շատ բան ունի սովորելու Ակադեմիայի ամեն մի աշխատակից՝ կրտսեր, ավագ, թե ակադեմիկոս։ Վ. Հ. Համբարձումյանն իր ուժերի ծաղկման գագաթնակետին է, դեռ շատ բան է սպասում նրանից մեր Սովետական հայրենիքը։

Հայկական ՍՍՌ ԳԱ տասարակական գիտությունների բաժանմունքն իր բոլոր հիմնարկների աշխատակիցներով սիրո և գովասանքի ջերմաջերմ ողջույնն է հղում արժանավոր պրեզիդենտին՝ նրա ծննդյան հիսնամյակի առթիվ և ցանկանում թանկագին հոբելյարին է՛լ ավելի մեծ եռանդ, տաղանդի է՛լ ավելի մեծ ծաղկում ու փթթում ի բարօրություն և ի սպաս Սովետական հայրենիքին և սովետական գիտությանը։